

ԿՈԶ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ

ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌԹԵԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Այս զարհան կը լրանայ ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆԻ երաժշտական գործունեութեան ԳՈՐԾՈՒՆԱՄԵԱԿԻՆ: Առաջին հայ երաժշտութեան մեծ վարպետին՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ Բ. Կանաչեան արժանաւոր շարունակողներէն է եղած անոր զործին: Իբր ճաղանդաւոր յօրինող-երաժիշտ եղած է զործեր, որոնք զարգացման նոր ուղիներ են բացած մեր ազգային երաժշտական արուեստին: Նաեւ, իբր հայ մեծ համերգներու նուիրեալ կազմակերպիչ, իբր հեղինակաւոր ու հարձար խմբավար, իբր խլիմալիս ուսուցիչ, Բ. Կանաչեան մեծանկելի նպաստ մը բերած է մեր երաժշտական մշակոյթի զարգացման ու արդիւնաւորման: Քառասուն տարիներու վաստակովը բեռնաւոր վարպետը այսպէսով լիովին արժանի կը հանդիսանայ յօրինական պատիւին զոր իրեն ընծայելով հայ հասարակութիւնը Հայ Արժեքներու գնահատումի իր ոգւոյն փառքը տուած կ'ըլլայ:

Մշակութային երաժշտական արժեքն զգացումով մը Պէրուքանայ «Գուսան» Մեղչախումբը — զոր տարիներէ ի վեր կը վարէ վարպետը — ստանձնած է նախաձեռնութիւնը տօնելու Բ. Կանաչեանի յօրինեանք: Ն. Ս. Օմուրիւն Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Գաւեգին Կարողիկոս շնորհած է ձեռնարկին իր բարձր հովանաւորութիւնը՝ մասնաւոր օրհնագրով մը զընդհանրելով տարիներու վաստակը երաժշտական, եւ համազգային կրօնական ու մշակութային անձնաւորութեանց նախազանգիւրեամբ յատուկ Յօրինական Կեդրոնական Յանձնախումբ մը կազմուած է արժանաւոր կերպով իրագործելու յօրինական տօնակատարութիւնը:

Հրատարակելով այն կոչը, Յօրինական Կեդրոնական Յանձնախումբը կը հրաւիրէ Սփիւռքի հայ հասարակութիւնը, իր բարոյական քէ նկրտական աջակցութիւնը բերել ձեռնարկին, որով, ոչ միայն Հայ արուեստին նուիրուած վաստակաւոր վարպետ մը պիտի պատուուի, այլ նաեւ, անոր տաղանդին բարիքին տեսականացումը պիտի ապահովուի, հրատարակութեամբ իր երաժշտական երկերուն եւ սկաւառակի առնուելովը իր համերգային իրագործումներուն:

Բ. Կանաչեանի երաժշտական գործունեութեան քառասունամեայ յօրինական տարի յայտարարուած է 1946-1947 զարհան տրջանը: Յօրինանի բացման Կեդրոնական համերգ-հանգիստութիւնը պիտի կատարուի Պէրուքանայ մեծ յառաջիկայ Մայիս տնտու վերջերը:

Յօրինական Կեդրոնական Յանձնախումբը վստահ է, որ Հայ հասարակութիւնը առհասարակ պիտի փութայ իր ջերմ մասնակցութիւնը բերել Յօրինանին, ու հայ սփիւռքի այլ կեդրոններ եւս պիտի չուսանան արձագանք տալ անոր, իրապէս համազգային դարձնելու համար վաստակաւոր վարպետին ընծայուած պատիւը՝ ի փառս Հայ Ազգային Արուեստին:

ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ

Հասցէ. — COMITÉ DU JUBILÉ GANATCHIAN

B. P. 732, Beyrouth - Liban

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
 Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.
 Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.